Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն

ՇՈՓԻՆԳԻ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Համայնքային ջրամատակարարման ծրագիր
Վարկ No 8129-AM

Երեք (3) Մարդաբեռնատար ավտոմեքենաների գնում,
Շոփինգ No.MWP-B2.6.2/2-7-2

1.Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային Բանկից Համայնքային Ջրամատակարարման Ծրագրի ծախսերը հոգալու համար և մտադիր է այդ վարկի գումարների մի մասն օգտագործել **Երեք (3) Մարդաբեռնատար Ավտոմեքենաների գնման, No.MWP-B2.6.2/2-7-2** համար:

2.«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն հրավիրում է իրավասու և որակավորված հայտատուներին գնառաջարկներ ներկայացնել **Երեք (3) Մարդաբեռնատար ավտոմեքենաների գնում, No.MWP-B2.6.2/2-7-2** շոփինգի համար:

3.Շոփինգն անցկացվելու է «Շոփինգի» ընթացակարգին համապատասխան, ինչը ամրագրված է Համաշխարհային Բանկի «ՎՋՄԲ վարկային և ՄՋԸ փոխառությունների/դրամաշնորհների շրջանակներում Գնումների ուղեցույցով» (2011թ. հունվար) և բաց է բոլոր իրավասու հայտատուների համար՝ ինչպես սահմանված է Ուղեցույցով: Ի լրումն, Հայտատուների ուշադրությունը հրավիրվում է ուղեցույցի 1.6 և 1.7 կետերին, որտեղ մասնավորապես նշվում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

4.Հետաքրքրված իրավասու հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գրասենյակում և ուսումնասիրել շոփինգի փաստաթղթերը՝ ներքոնշյալ հասցեով, աշխատանքային ժամերին 9.00-ից մինչև 17.00-ը (տեղական ժամանակով):

5. Շահագրգիռ հայտատուները կարող են ստանալ Շոփինգի փաստաթղթերի ամբողջական փաթեթն հայերեն լեզվով՝ գրավոր դիմում ներկայացնելով ներքոհիշյալ հասցեով էլ. փոստով կամ առձեռն:

Լրացուցիչ մանրամասները ներկայացված են Շոփինգի փաստաթղթերում:

6. Գնառաջարկները պետք է ներկայացվեն ներքոհիշյալ հասցեով մինչև ***2014թ.-ի Դեկտեմբերի 19-ը, ժամը 18:00 (տեղական ժամանակով)*** կամ ավելի շուտ՝ առձեռն, էլեկտրոնային փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային այլ միջոցներով ստորև ներկայացվող հասցեով:

7. Վերը հիշատակված հասցեն հետևյալն է.

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (ՀՋԿ ՓԲԸ)

Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինություն
Պրն. Ն. Գևորգյան՝ ՀՋԿ ՓԲԸ-ի ՆԾՀ տնօրեն
Քրիստինե Ղամբարյան՝ Գնումների մասնագետ
Վարդանանց փակուղի 8ա, 3-րդ հարկ
0010, Երևան, ՀՀ
Հեռ./ ֆաքս (+374 10) 54 28 77

Էլ-փոստ: *ngevorgyan@armwater.am, kghambaryan@armwater.am, echilakopyan@armwater.am*